Fwd: Տեղեկության հարցում

From **info@escs.am** Date **Today 11:43**

Attachments

- **COAF-ի շահառու գյուղերը.pdf (~87 KB)** Show options

Message Body

-------- Исходное сообщение --------
Тема: Տեղեկության հարցում
Дата: 2020-08-03 18:20
От: Lilith Hakobyan <lilith.hakobyan@coaf.org>
Кому: info@escs.am, secretariat@escs.am

Հարգելի ՀՀ ԿԳՄՍ նախարարություն,

Ես Հայաստանի մանուկներ բարեգործական հիմնադրամի [1] (ՔՈԱՖ) կրթական ծրագրերի ղեկավար Լիլիթ Հակոբյանն եմ: Գրում եմ տեղեկության հարցման նպատակով: Նախարարության հայտարարությունից [2] տեղեկանում ենք, որ ՀՀ ԿԳՄՍՆ-ը հեռավար կրթությունից դուրս մնացած աշակերտներին ապահովել է տեխնիկայով և ինտերնետ կապով՝ բաց թողած դասերը լրացնելու նպատակով:

ՔՈԱՖ-ն իրականացնում է մի շարք արտադասարանային կրթական ծրագրեր Հայաստանի 50 գյուղերում: Մենք ևս ստիպված էինք մեր կրթական ծրագրերը կազմակերպել հեռավար կերպով արտակարգ դրության հայտարարումից հետո: Տեխնիկական ապահովման բացակայության պատճառով մեր ծրագրերի մասնակիցների մի զգալի մաս բաց թողեց այս ընթացքի հեռավար հանդիպումները. մեր ունեցած ռեսուրսներով միայն մի մասին կարողացանք տեխնիկապես աջակցել:

Սեպտեմբերից պատրաստվում ենք վերսկսել մեր կրթական ծրագրերը և փորձում ենք պատրաստվել հավանական հեռավար դասերին, քանի որ մեր առջև խնդիր ենք դրել ապահովելու աշակերտների մեծամասնության մասնակցությունը:

Այս առումով շատ օգտակար կլիներ որոշակի տեղեկություն ստանալ Նախարարությունից.

* ՀՀ ԿԳՄՍՆ-ը ո՞ր համայնքներում է տեխնիկական աջակցություն տրամադրել աշակերտներին: Մեզ մասնավորապես անհրաժեշտ է տեղեկություն ՔՈԱՖ-ի

շահառու համայնքների մասին, որոնց ցանկը կցում եմ նամակին։

* Տվյալ համայնքներում ձեր տրամադրած աջակցությունը որքա՞ն ժամանակով է կիրառվելու։

* Նաև խնդրում եմ հուշել, թե այնուհետև ո՞ր ենթակառուցվածքից կարող ենք վերցնել աջակցություն ստացած աշակերտների անվանական ցանկը մեր ծրագրերի մասնակիցների հետ նույնացնելու նպատակով։

Կանխավ շնորհակալ եմ։

Հարգանքով՝ Լիլիթ

--

ԼԻԼԻԹ ՀԱԿՈԲՅԱՆ

կրթական ծրագրերի ղեկավար

[3]

+374 094 216303 | coaf.org [4]
[5] [6] [7] [8] [9]

Links:
------
[1] https://am.coafkids.org/
[2] http://escs.am/am/news/6832
[3] https://www.coaf.org/
[4] http://www.coaf.org/
[5] https://www.facebook.com/coafkids
[6] http://www.instagram.com/coafkids
[7] http://www.twitter.com/coafkids
[8] http://www.youtube.com/user/coafkids
[9] http://www.linkedin.com/company/coafkids